

Հայր Աբրահամի քարո՛ւկը մեր տան թեմէլն է դըրած:

Երգ թագաւոր հագուեցնելու

Ան բարձրը լեռներն ի վար, մեզի բարկ արեւ մն է ցաթեր.
 Ըմմէսուն երդիքն ի վար, մեզի դուռն ի ներս ճառագեր:
 Ըմէնդ ի վըրայ եկէք, թագաւորին կապան կարեցէք.
 Լուսընկան աստառ երէք, արեգակն երես ձեւեցէք.
 Ան մոյ ու խոշոր աստղեր թելերուն տիւկմէ կարեցէք:
 Հա՛յ իմ պզտիկ Թագաւոր, կըլորեր ես մէջ ծըմերուն (?).
 Ճովերդ (?) ի երդիքն ելեր, կախուեր է խոշոր ճիւղերուն:
 Հովե՛ր, տարուբեր հովե՛ր, եղբօրմէս մէկ գըրիկ բե՛ր.
 Թէ գըրին տալապ ջանէ, փարջամէն Թելիկ մի բե՛ր:
 Հովե՛ր, տարուբեր հովե՛ր, գէշը տա՛ր՝ աղուորին բե՛ր.
 Գէշին տերն արեւ ջունի, աղուորին՝ գիշերն է արեւ:
 Գացէք մեծ վարպետ բերէք, աղուորին խաբդան ձեւեցէք,
 Արեգակն երես արէք, լուսընկան աստառ ձեւեցէք,
 Ինչ սեր կայ՝ դըրէք սուգակ, ինչ անոյշ բաներ կան՝ կոճակ:

ԱՆՏՈՒՆԻՆԵՐ ՂԱՐԻՊՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Աղուոր մը ծարուութենէն նըստեր է ջըրին վըրայ.
 Կըտրիճ մը, անոր սիրուն, գընաց ի դէմ խօսելու.
 Նըստաւ ու սեվտան ինկաւ, մոռցաւ ինչ բան խօսելու.
 Ըսաւ՝ խահրըման կըլիճ, դուն ի՞նչ ժուռ կուգաս աս տեղը:
 Ըսաւ քի՛՝ Տերտիս համար ժուռ կուգամ հեքիմ բըռելու:
 Ըսաւ քի՛՝ Տերտըդ ի՞նչ է, մի՛ վախնար ըռընտցընելու:
 –Խընծորդ է կապեր չալղայ, ես մատա ունիմ ուտելու:
 Չուտիմ նը մատաս կ’ուզէ, ես վախիմ քի գողցընելու.
 Բացուեր է պախճիդ վարդը, ես պաղպան լընիմ քաղելու.
 Քաղիմ ու տեսթէ անիմ, պէլքի թը թըմրիմ հոտերուն:
 Ա՛յ իմ աննըման աղուոր, ես քենէ պագիկ մը կ’ուզիմ:
 Խարիպ երկիր եար ունիս, դուն սեպէ՛ գէքէթ արելուն:
 –Պագ մի չէ, երկուք կուտամ խարիպիս քովէն գալողին.
 Դուն ինձմէ պագ մի կ’ուզիս, ես հագար կուտամ բերողին: